ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

Կատարող՝ Արշակ Գասպարյան Սուրենի
անուն ազգանուն, հայրանուն

Ղեկավար՝ Փարկիթյան Անահիտ
անուն ազգանուն

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

1.Մանկավարժական գործընթացի կազմակերպումը միջին դպրոցում.....5

2. Ստեղծագործական մտածողության և ստեղծագործական ունակությունների ձևավորման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարի-քում.....17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....22

ՕԳՏԱԳՈՐԾ ՎԱԾԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Թեման արդիական է, քանի որ ձեռքի աշխատանքը ժամանակակից դպրոցում մեծ դեր ունի անձի լիարժեք ձևավորման գործում: Ձեռքի աշխատանքը նպաստում է աշակերտների ստեղծագործական մտածողության, երևակայության, գեղագիտական ճաշակի, գունային զգացողության զարգացմանը, ձևավորում է ինքնուրույն աշխատանք կատարելու, տարբեր նյութերի հետ աշխատելու, հետազոտելու, համադրելու, հակադրելու, վերլուծելու ունակություններ:

Չնայած նրան, որ այժմ շատ արտադրություններ անցել են ավտոմատացման, այնուամենայնիվ ձեռքի աշխատանքը շարունակում է իր ուրույն տեղը զբաղեցնել տարրական դպրոցի ուսուցման և դաստիարակության գործընթացում, քանզի բացի վերը նշվածից զանազան ձեռագործ աշխատանքների պատրաստումը ակտիվորեն զարգացնում է ձեռքի մկանների մանր շարժունակությունը, որն էլ իր հերթին խթանում է գրավոր աշխատանք կատարելու ունակությունների ձևավորմանը:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է գիտական աշխատությունների, չափորոշիչների, դասագրքերի ուսումնասիրման, ինչպես նաև ժամանակակից մեթոդաբանական մոտեցումների վերլուծության հիման վրա ներկայացնել միջին դպրոցում ձեռագործ աշխատանքների պատրաստման ժամանակակից մեթոդներն ու եղանակները՝ ցույց տալով դրանց նշանակությունը միջին դպրոցականների ստեղծագործական ունակությունների և մտածողության ձևավորման գործում:

Աշխատանքի խնդիրները: Աշխատանքի խնդիրներն են.

1. Ուսումնասիրել միջին դպրոցում մանկավարժական գործընթացի կազմակերպման մեթոդներն ու առանձնահատկությունները:
2. Ծանոթանալ երեխաների անձի ձևավորման առանձնահատկություններին՝ միջին դպրոցական տարիքում:
3. Ծանոթանալ տարրական դպրոցում սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորման նշանակությանը և առանձնահատկություններին:
4. Ցույց տալ միջին դասարաններում ձեռագործ աշխատանքների կատարման ժամանակ տարատեսակ մեթոդների, դիդակտիկ նյութերի կիրառման արդյունավետությունն ու կարևորությունը:

5. Ցույց տալ ձեռքի աշխատանքի զբաղեցրած դերը միջին դպրոցականների ստեղծագործական մտածողության, երևակայության, գեղագիտական ճաշակի, ուսման հանդեպ մոտիվացիայի, ճանաչողական կարողությունների ձևավորման և զարգացման գործում:
6. Ձեռագործ աշխատանքներ կատարելու միջոցով ավելի պատկերավոր, մատչելի և դյուրըմբռնելի դարձնել աշակերտների համար դասագրքի նյութը:

Ուսումնասիրության առարկա: Շիրակի մարզի Գյումրու թիվ 7 հիմնական դպրոցի 5-րդ դասարանի տեխնոլոգիայի դասերին ձեռագործ աշխատանքների պատրաստման և կիրառման մեթոդիկա:

1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսուցումը սոցիալապես պայմանավորված մանկավարժական գործընթաց է, որը բխում է մարդու՝ որպես հասարակական հարաբերությունների սուբյեկտի, վերարտադրման անհրաժեշտությունից: Այստեղից էլ ծագում է ուսուցման սոցիալական կարևոր գործառույթը՝ հասարակության պահանջներին համապատասխան անձի ձևավորումը: Մանկավարժական գործընթացը ճանաչողական գործունեություն է, որը խթանում է սովորողների գիտական գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու, ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու, գիտական աշխարհայացք ձևավորելու, բարոյական որակներ ու համոզմունքներ ձեռք բերելու գործընթացը[1]:

Ուսուցման գործընթացն ունի երկկողմանի բնույթ՝ դասավանդում և ուսումնառություն: Դասավանդումն ուսուցչի գործունեությունն է, իսկ ուսումնառությունը՝ աշակերտի կամ աշակերտական կոլեկտիվի: Դասավանդումն իրականացնում է ուսուցիչը, որի ընթացքում նա՝

◆ որոշում է ուսումնական գործընթացի նպատակները, ձևավորում է սովորողների դրդապատճառներն ու պահանջմունքները,

◆ հստակեցնում է ուսումնական նյութի բովանդակությունը՝ ըստ ուսուցման տարամակարդակ պահանջների,

◆ կազմակերպում է սովորողների ուսումնաճանաչողական գործունեությունը ուսումնական նյութի շրջանակներում,

◆ աշակերտներին հաղորդում է մարդկության կուտակած սոցիալմշակութային փորձը, անհրաժեշտ պայմաններ է ստեղծում սովորողների ակտիվության համար, ուղղորդում, վերահսկում է նրանց գործունեությունը՝ ապահովելով անհրաժեշտ միջոցներ և տեղեկատվություն,

◆ սովորողների ուսումնական գործընթացին հաղորդում է դրական հուզական բնույթ, ապահովում բարոյահոգեբանական դրական մթնոլորտ,

---

[1] Էլկոնին Դ.Բ., Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Եր., 1975, էջ 51:

◆ կարգավորում և վերահսկում է սովորողների ուսումնական գործունեությունը, գնահատում է այդ գործունեության ընթացքն ու արդյունքները[2]:

Միջին դպրոցական տարիքում առաջատար գործունեություն դառնում է ուսումնական գործունեությունը, որը շարունակվում է դպրոցական կյանքի ողջ ժամանակահատվածում, սակայն դրա հիմքերը դրվում են ուսուցման առաջին տարիներին[3]:

Ուսումնական գործունեությունն ունի որոշակի կառուցվածք: Դ.Բ. Էլկոնինն առանձնացնում է հետևյալ կառուցվածքային բաղադրամասերը.

◆ **Մոտիվացիոն կամ դրդապատճառային բաղադրամաս**: Կրտսեր դպրոցականի ուսումնական դրդապատճառները տարբեր են: Ուսումնական գործունեության հիմքում կարող են ընկած լինել մեծահասակների խրախուսանքին արժանանալու, բարձր գնահատական ստանալու, պարտքի, պատասխանատվության և ուրիշ շատ դրդապատճառներ: Դրանցում մենք, մասնավորպես, առանձնացնում ենք այնպիսիքը, որոնք առավել համարժեք են ուսուցման խնդիրներին և որոնց շնորհիվ աշակերտի գործունեությունը դառնում է առավել բովանդակալից ու արդյունավետ:

◆ **Ուսումնական խնդիր**: Այն որոշակի առաջադրանքների, հանձնարարությունների ամբողջությունն է, որի կատարման ընթացքում երեխան ձեռք է բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

◆ **Ուսումնական գործառույթներ**: Սրանք ուսումնական հիմնական գործողություններն են և մտնում են ուսումնական գործունեության կազմի մեջ:

◆ **Վերահսկում և ինքնավերահսկում**: Կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեությունն սկզբում վերահսկվում է ուսուցչի կողմից: Հետագայում երեխան աստիճանաբար սովորում է ինքնավերահսկել սեփական ուսումնական գործունեությունը: Ինքնավերահսկելու կարողությունը ձևավորվում է ինչպես ուսուցչի հսկողությամբ, այնպես էլ՝ տարերայնորեն: Կարևոր է, որ աշակերտը վերահսկի ոչ միայն իր ուսումնական գործունեության վերջնական արդյունքը, այլ և ողջ գործընթացը փուլ առ փուլ, քայլ առ քայլ:

---

[2] Բալյան Ա.Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Եր., 1983, էջ 206-208:
[3] Նույն տեղում, էջ 257-258:

◆ **Գնահատում և ինքնագնահատում**: Ուսումնական գործունեության կարևոր բաղադրամասը գնահատումն է, որի ընթացքում ուսուցիչն աշակերտին նշանակում է ոչ միայն միավորային գնահատական, այլև մեկնաբանում է, հիմնավորում այն, ինչը երեխայի աշխատանքում լավ է, նշում առաջադիմության շարժընթացը՝ շեշտադրելով դրականը, բացասականը, ուղղորդում, թե ինչը պետք է շտկի կամ հետագայում զարգացնի: Այսինքն՝ ուսուցիչը պետք է գնահատման որոշակի չափանիշներ, կողմնորոշիչներ ներկայացնի երեխային, որի արդյունքում նա կկարողանա գնահատել սեփական աշխատանքի արդյունքները: Խոսելով ինքնագնահատականի մասին՝ պետք է նշել, որ երեխան հիմնականում դպրոց է գալիս բարձրացված ինքնագնահատականով: Ընդհանրապես, երեխայի կողմից բարձր է գնահատվում այն աշխատանքը, որն արագ է արվում, որի վրա ինքը շատ ջանքեր է ծախսում՝ հաճախ անտեսելով ստա-ցած արդյունքը: Ի դեպ՝ կրտսեր դպրոցականն ավելի քննադատաբար է մոտենում ընկերների աշխատանքին՝ բարձր արժևորելով սեփական աշխատանքը: Հարկավոր է հասնել նրան, որ երեխանգնահատի ոչ միայն իր աշխատանքի վերջնարդյունքը, այլև իր ուսումնական գործունեության ողջ գործընթացը: Դասարանական կոլեկ-տիվը սոսկ տարեկիցների խումբ չէ, այն ենթադրում է անձնական ցանկությունները ընդհանուր ձգտումներին ենթարկելու կարողություն, համագործակցություն, փոխադարձ պահանջկոտություն, փոխօգնություն, կոլեկտիվ պատասխանատվություն, կազմակերպվածություն և կարգապահության բարձր մակարդակ: Իսկ դրանք հասարակական վարքի բնութագրիչներ են, որոնց հիմքերը դրվում են տարրական դպրոցում[4]:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի և աշակերտի համատեղ, միաժամանակյա գործունեությամբ: Այս գործընթացում կարևոր է աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացումը, նոր հնարների, մեթոդների կիրառումը՝ գիտելիքների գիտակցական և առավելագույն յուրացման համար: Դասավանդումը և ուսումնառությունը սերտորեն փոխկապված են. ուսուցման գործընթացը սուբյեկտ-սուբյեկտ փոխազդեցություն է, որում աշակերտները մշտապես պետք է գտնվեն սուբյեկտի դերում: Այս մոտեցումը բխում է ան-

[4] Эльконин Д.Б., Детская психология, Москва, 2007, стр. 177-183.

ձնակենտրոն կրթության հայեցակարգայինդրույթներից և արդիական է հատկապես տեղեկատվական հասարակության զարգացման արդի ժամանակաշրջանում[5]:

Ըստ Դ.Բ.Էլկոնինի՝ արդյունավետ ուսումնական գործունեության հիմնական առանձնահատկությունն այն է, որ աշակերտը փոխում է ինքն իրեն: Սա նշանակում է, որ կրտսեր դպրոցականն անտարբեր չէ իր գործունեության նկատմամբ, գիտակցում է գիտելիքներ ստանալու կարևորությունը, կարողանում է պարզ ենթադրություններ կատարել և փաստարկներ գտնել դրանց հիմնավորման ու ապացուցման համար, տարրական մակարդակով վերլուծում է իր գործունեությունը, գնահատում է հաջողությունները, որոշում է անհաջողությունների կամ սխալների պատճառները և փորձում դրանք ուղղել: Բայց դա հնարավոր է, եթե ձևավորվում է ուսումնական գործունեություն ծավալելու աշակերտի կարողությունը, և նա դառնում է ուսուցման գործընթացի սուբյեկտ: Աշակերտին սովորել են սովորեցնում, երբ նա ուսուցման արդյունքների հարցում զգում է անձնական պատասխանատվություն, ունի ինքնակրթության և ինքնազարգացման կարողություններ[6]:

Ուսուցման զարգացնող գործառույթի իրականացումը ենթադրում է ուսուցման գործընթացում անձի ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնում և բավարարում, տրամաբանական գործընթացների ակտիվացում, վերլուծելու, համադրելու, համակարգելու, ընդհանրացնելու, վերացարկելու, համեմատելու, փաստարկելու, դասակարգելու, ամփոփելու, եզրահանգելու կարողությունների ձևավորում, մտագործունեության ակտիվացում, լեզվամտածողության և խոսքի մշակույթի զարգացում, սենսորային և շարժողական հմտությունների ակտիվացում, ստեղծագործական ունակությունների բացահայտում, վերլուծական, քննադատական, տրամաբանական մտածողության զարգացում: Միայն այս պայմաններում ուսուցման գործընթացում գիտելիքների յուրացումն ընթանում է սովորողի զարգացմամբ և կազմակերպված է այնպես, որ սովորողներին ընդգրկում է ակտիվ և գիտակցական բազմաբնույթ գործունեության այնպիսի տեսակների մեջ, որոնք զարգացնում են նրա զգայական ընկալումը, շարժողական, մտավոր, կամային, հուզական, դրդապատճառային ոլորտները[7]:

---

[5] Բալյան Ա.Ա., Աշակերտների ճանաչողական պահանջմունքները և դրանց ձևավորման ուղիները,Եր., 1982, էջ 62:

[6] Էլկոնին Դ.Բ., նշվ. աշխ., էջ 75:

[7] Բալյան Ա.Ա., Մանկավարժական..., էջ 254:

10-15 տարեկանում երեխայի զարգացումն ընթանում է համեմատաբար համաչափ /հասակը, քաշը, դիմացկունությունը, գլխի չափը, թոքերի կենսական տարողությունը և այլն/: Կրտսեր դպրոցական տարիքի համեմատ այս փուլում դանդաղում է հասակի աճը և ավելանում է քաշը, ոսկրային համակարգը դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Ողնաշարի, կրծքավանդակի, կոնքի, վերջույթների ոսկրացումն այս տարիքում դեռևս ավարտված չէ. ոսկրային համակարգում շատ կրճիկային հյուսվածքներ կան: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է մշտապես հոգալ աշակերտի մարմնի ճիշտ դիրքի, կեցվածքի, քայլվածքի ուղղությամբ: Այս տարիքում ակտիվորեն զարգանում է երեխայի մկանային համակարգը, հատկապես՝ ձեռքերի մանր մկանները, մատների ֆալանգները, մատները ձեռք են բերում ճկունություն, որն իր հերթին նպաստում է գրավոր աշխատանքների կատարման գործընթացի արդյունավետությանը: Կրտսեր դպրոցական տարիքում շարունակում են զարգանալ երեխայի նյարդային համակարգը, գլխուղեղի կիսագնդերի գործառույթները: Տեղի է ունենում ուղեղի կենտրոնների գործառույթների կատարելագործում, աստիճանաբար փոփոխվում է գրգռման և արգելակման գործընթացների փոխադարձ պայմանավորվածությունը: Գլխուղեղի արգելակման գործընթացն ավելի է ուժեղանում, սակայն առաջվա նման գերիշխում է գրգռման գործընթացը՝ կրտսեր դպրոցականին դարձնելով չափազանց դյուրագրգիռ[8]:

Միջին դպրոցական տարիքում երեխան արդեն հոգեբանորեն պատրաստ է ուսումնական գործունեության, գրեթե առանց դժվարությունների իրականացվում է կրտսեր դպրոցականների ճանաչողական գործունեությունը, և այդ գործընթացում նրանք աչքի են ընկնում ընկալման սրությամբ ու թարմությամբ: Ուշագրավ է, որ ուսումնական նյութի ընկալման ընթացքում խորացված, կազմակերպված և նպատակաուղղված վերլուծություն նրանք դեռևս չեն կարողանում իրականացնել,երբեմն նկատելով պատահական մանրամասներ՝ չեն ընկալում էականը: Ուսուցման գործընթացի սկզբնական շրջանում կրտսեր դպրոցականների ընկալման մակարդակը սերտորեն պայմանավորված է նրանց գործողություններով և պրակտիկ գործունեությամբ: Նրանք ուսուցչի օգնությամբ սովորում են ոչ միայն պարզապես դիտել, այլև զննել, ուսումնասիրել, բացահայտի առարկաների ու երևույթների էական ու կարևոր

[8] Մելքումյան Մ.Ս., Երեխաների զարգացումն ու տարիքային մի քանի առանձնահատկությունները, Եր., 1957, էջ 32-35:

հատկանիշները, վերլուծել դրանք, որոշակի եզրահանգումներ անել, կարողություններ, որոնք բարձրակարգ մտածողության բաղադրիչներն են և նպաստելու են հետագա ուսումնական գործունեության արդյունավետությանը[9]:

Միջին դպրոցականների ուշադրության հիմնական առանձնահատկությունը ոչ կամածինությունն է. Նա կամքի ուժով չի կարող իր ուշադրությունը որոշակի ժամանակով բևեռել անհրաժեշտ ուսումնական նյութի վրա (ուշադրությունը շեղվում է), յուրաքանչյուր նորը, ցայտունը, հետաքրքիրը իր վրա է բևեռում աշակերտների ուշադրությունը, եթե այն հետաքրքիր է, գրավիչ, ոչ սովորական: Ուստի այս տարիքում ուսումնական նյութի ուսումնասիրության գործընթացը պետք է հագեցած լինի զննականությամբ, արտահայտչականությամբ և աշակերտների շրջանում առաջացնի հուզական վերաբերմունք: Կարևոր է նկատի ունենալ, որ միջին դպրոցականները չափազանց տպավորվող են և հաճախ ավելորդ զննսպաննություն ու զգացմունքային խթանիչները նրանց հիշողության մեջ մտապահվում են ոչ թե ուսումնական նյութի մանրամասները, այլ զննականության գրավչությունը: Իհարկե՛, չափից ավելի զննականությունը և վառ տպավորությունները երբեմն կարող են գլխուղեղի կեղևում սըտեղծել գրգռման այնպիսի ուժեղ օջախներ, որոնք կարող են արգելակել ըմբռնելու, նյութը վերլուծելու և ընդհանրացնելու ամեն մի հնարավորություն: Ժամանակի ընթացքում երեխաների ուշադրությունը աստիճանաբար դառնում է համեմատաբար տևական ու կայուն, և աշակերտները ձեռք են բերում ուշադրությունը կառավարելու որոշակի փորձ: Դա հստակորեն արտահայտվում է խաղերի ժամանակ, նկարելու, ծեփելու և այլ պարապմունքների ընթացքում[10]:

Միջին դպրոցականի հիշողությունը մեխանիկական է և որոշակի մակարդա-կով զարգացած: Նա հատկապես հիշում է այն, ինչն իրեն առանձնապես զարմացնում է, ինչն անմիջականորեն խարախվում է նրա հետաքրքրությունների վրա: Միջին դպրոցական տարիքին բնորոշ է առարկայական-պատկերային հիշողությունը, սակայն կան նաև բառատրամաբանական հիշողության զարգացման բոլոր նախադրյալները: Այս տարիքի երեխաները սովորաբար ունենում են նյութը մեխանիկորեն մտապահելու ունակություն: Նրանք հաճախ բառացիորեն սերտում և վերարտադրում են ուսումնական նյութը՝ առանց խորանալու բովանդակության մեջ և

---

[9] Подласый И.П., Педагогика начальной школы, Москва, 2000, стр. 169-172.
[10] Մելքումյան Մ.Ս., նշվ. աշխ., էջ 48:

փորձում են իրենց բառերով վերարտադրել: Մանկավարժական ճիշտ աշխատանքի դեպքում նրանք աստիճանաբար ձեռք են բերում մտապահման հնար-ներ. Նյութի իմաստային խմբավորումը, նյութը մասերի հարաբերակցումը, տեքստի պլանի կազմումը, տարաբնույթ զուգորդումների ստեղծումը և այլն[11]:

Ըստ Լ.Ս. Վիգոտսկու՝ եթե միջին դպրոցական տարիքի երեխաների հոգեկան գործընթացների մեջ գերիշխող է հիշողությունը, ապա միջին դպրոցական տարիքում գերիշխող է մտածողությունը: Այս հանգամանքով պայմանավորված՝ արագորեն զարգանում են աշակերտի մտածողության տեսակները: Եվ քանի որ մտավոր զարգացման աստիճանով է պայմանավորված մյուս հոգեկան գործընթացների զարգացումը, սրա արդյունքում զարգանում են նաև երևակայությունը, կամքը, զգացմունքները և այլն: Անցում է կատարվում նախադպրոցական տարիքին բնորոշ ակնառու-պատկերային մտածողությունից բառատրամաբանական մտածողության, երեխան կարողանամ է վերլուծել, տրամաբանորեն դատել, մտքեր ձևակերպել[12]:

Ուսուցման գործընթացում զգալի փոփոխություն է կրում նաև միջին դպրոցականի մտածողությունը: Ինչպես նշեցինք, կրտսեր դպրոցականը /հատկապես 6-8տարեկան/ մտածում է՝ հենվելով կոնկրետ առարկաների, երևույթների ակնառու հատկությունների և որակների վրա: Այսինքն՝ նրանց մտածողությունը առարկայական է: Ուսումնական գործունեության ընթացքում աշակերտները առարկաների, երևույթների արտաքին կողմը ճանաչելով՝ բացահայտում են նաև դրանց էությունը, սովորում են համեմատել, հակադրել, համադրել, ընդհանրացնել, ստեղծում են պատճառահետևանքային կապեր և որոշակի եզրահանգումներ են կատարում: Այս ամենի հետևանքով դեռահասության շրջանում մտածողությունը պատկերավոր-առարկայականից աստիճանաբար փոխակերպվում է դեպի վերացականի, իսկ այնուհետ զարգանում են մտածողության մյուս ձևերը[13]:

Միջին դպրոցականները կարող են ոգևորվել հեքիաթում նկարագրված ոչ իրական դեպքերով, խոսող ծառերով և թռչող ավելով, հավատալ բարի հերոսի հաղթանակ-ներին ու չարի կործանմանը: Սա նրանց երևակայության ոչ հողածին, ոչ երկրային հատկանիշն է, որը պիտի անպայման օգտագործվի որպես զգացմունքային

---

[11] Ամիրջանյան Յ., Սահակյան Ա., Մանկավարժություն, Եր., 2005, էջ 223:
[12] Кулагина И.Ю., Младшие школьники, Москва, 2009, стр. 176.
[13] Նույն տեղում, էջ 178:

խթանիչ։ Այս իմաստով ամենից առաջ կատարելագործվում է վերստեղծող երևակայությունը, որը պայմանավորված է նախկինում տեսածը, կարդացածը, լսածը երևակայությամբ պատկերացնելու, կամ նկարագրությանը, նկարին, սխեմային համապատասխան կերպարներ ստեղծելունրա կարողությամբ[14]։

Պետք է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուտ խոսքային միջավայր, դասաժամերին ստեղծելով արտահայտ-վելու, հաղորդակցվելու հնարավորություններ, առաջացնելով արտահայտվելու, գեղեցիկ խոսելու պահանջմունքներ։ Այս տարիքում ձևավորվում է նաև գրավոր խոսքը, որը երեխայի համար բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է, որի ընթացքում զարգանում է ոչ միայն նրա գրագետ խոսք կառուցելու բազմաբաղադրիչ կարողությունը, այլև անձնային բազմաթիվ որակներ, որոնք չափազանց կարևոր են հետագա ուսումնական գործունեության ընթացքում[15]։

Առաջին հերթին հարկ է նշել նրանց իմպուլսիվությունը՝ անմիջական ազդակ-ների ազդեցության տակ անհապաղ գործելու հակումը։ Միջին դպրոցականի բնավորության տարիքային առանձնահատկություններից են նաև զգայունությունը, բարձր խոցելիությունը, հուզականությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, դյուրա-հավատությունը, ընդօրինակումը։ Նրանք ընդօրինակում են ծնողներին, մեծերին, դիտած կինոնկարների հերոսներին։ Այս հատկանիշը, անշուշտ, հնարավորություն է տալիս անձնական օրինակով երեխայի մեջ դաստիարակել արժեքավոր գծեր, սակայն չպետք է մոռանալ, որ կրտսեր դպրոցականը կարող է ընդօրինակել և ոչ միայն լավը, այլև՝ բացասականը։ Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ուսուցիչը և երեխայի հետ շփվող յուրաքանչյուր չափահաս իր վարքով ու խոսքով, համոզմունքներով և սովորություններով միայն դրական օրինակ պիտի ծառայի[16]։

Ինքնատիպ են միջին դպրոցականների սեփական անձը և ուրիշին գնահատելու ունակությունները։ Այս պատճառով հաճախ տարրական դպրոցում կարող են առաջանալ որոշ խնդիրներ՝ պայմանավորված երեխաների գնահատականով և ին-քնագնահատականով։ Ինքնագնահատման գործում մեծ դեր ունեն ընտանեկան դաս-

---

[14] Ամիրջանյան Յ., Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 255։
[15] Նույն տեղում, էջ 257։
[16] Նույն տեղում, էջ 29-30։

տիարակության ոճերը, ընտանիքում ընդունված արժեքները: Արհեստականորեն բարձրացված ինքնագնահատականով երեխաներն ընտանիքում դաստիարակվում են ընտանիքի «կուռքի» սկզբունքով և վաղ գիտակցում իրենց բացառիկությունը:

Իջեցված ինքնագնահատականով երեխաները տանը մեծ ազատություն են ստանում, բայց դա, ըստ էության, ծնողների՝ իրենց և երեխաների նկատմամբ անտարբերության հետևանք է: Նման ծնողները երեխաների կյանքին մասնակցում են միայն այն ժամանակ, երբ ծագում են որոշակի խնդրիներ՝ պայմանավորված նրանց վարքով կամ ուսումնական առաջադիմությամբ: Իր՝ որպես աշակերտի նկատմամբ վերաբերմունքը մեծապես որոշվում է ընտանեկան արժեքներով, երեխայի մեջ առաջին պլան են մղվում նրա այն որակները, որոնք առավել մտահոգում են ծնողներին՝ հեղինակության պահպանումը, ենթարկվող, խելոք լինելը և այլն: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, երեխաների և ծնողների ունեցած ուսումնական ոլորտի արժեքներն հինգերորդ դասարանում ամբողջովին համընկնում են, իսկ վեցերորդ դասարանում՝ տարբերվում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ պետք է համակցված աշխատանք իրականացնել դրանց ճիշտ և ամբողջական ձևավորելու ուղղությամբ: Այս խնդիրների աստիճանական լուծման գործընթացում զարգանում է նաև միջին դպրոցականի ինքնագիտակցությունը: Ընդ որում՝ միջին դպրոցականի ինքնագիտակցության ձևավորումը պայմանավորված է ոչ միայն նրա ուսումնական հաջողություններով, այլև ուսուցչի հետ հաղորդակցման ձևերի յուրահատկությամբ: Հաճախ է պատահում, որ ընտանիքում երեխաներին անհարկի գովաբանում են, տալիս են բարձր գնահատական, իսկ դպրոցում նրանց տրված իրական գնահատականը չի համապատասխանում ընտանիքներում ձևավորված ինքնագնահատականին: Այս հակասությունը կարող է խնդիրներ առաջացնել երեխայի կյանքում և անբա-ռեհարմարություն նրա հոգեկան աշխարհում: Միջին դպրոցի ուսուցչի գերխնդիրը պետք է լինի խորությամբ ճանաչել իր աշակերտներին, ապա նոր գնահատել նրա գործունեությունը:

2.ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Ժամանակակից ուսումնական գործունեությունում կարևորագույն հայտանիշ է միջին դպրոցականների մոտ ստեղծագործական մտածողության ձևավորումը: Ինչպես նշում են հետազոտողները, ստեղծագործական մտածողության ծագումը հիմնականում բնութագրվում է մտածական գործունեության կառուցվածքով, հարստությամբ, բարդությամբ և մտավոր գործողությունների արդյունավետությամբ: Աշակերտը, տիրապետելով առաջադրված դասանյութին, հենվում է ոչ միայն ուրիշների, այլև, սեփական դատողությունների, մտահանգումների, ապացույցների վրա: Մյուս կողմից՝ նա քննադատորեն է վերաբերվում ուրիշների մտքերին: Սակայն սեփական անձի նկատմամբ քննադատական մոտեցումը դեռևս բացակայում է կամ շատ մակերեսային է, ուստի այն զարգացնելու անհրաժեշտություն ունի:

Ստեղծագործական ունակությունն ու կարողությունը, նախ և առաջ, ուսումնասիրվող երևույթն ինքնուրույն վերլուծելու կարողությունն է՝ այն հիմնական տարրերի բաժանելու և առաջնայինը առանձնացնելու միջոցով, ապա՝ իմաստավորելու ամեն մեկի տեղն ու դերը ամբողջի մեջ՝ կարևորելով օրինաչափությունների առկայությունը ուսումնասիրվող նյութի տրամաբանությունում:

Յուրաքանչյուրի մոտ ստեղծագործական մտածողության նշանները երևան են գալիս տարբեր աստիճանի դրսևորումներով: Այս ունակության ձևավորումը ուսուցման կարևորագույն խնդիրներից է, որի մեջ առաջնայինը ճանաչողական միջոցների տիրապետումն է: Հոգեբանները պնդում են, որ մտածողությունն սկսվում է այն ժամանակ, երբ ծագում է խնդիրը: Համակարգված գիտելիքների մակարդակն էական նշանակություն ունի երեխայի մտավոր զարգացման բնութագրի համար: Էլ ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում ընդհանրացված կարողությունների ձևավորումը: Բայց և այնպես, ամենահուսալի չափանիշը համարվում է մտքի որակը: Այս բոլոր ցուցանիշները փոխվում են ուսումնական մակարդակի բարձրացման հետ, աճում է գիտելիքների պաշարը, մեծանում է դրանց համակարգվածությունը, հարստանում են կարողությունների միջոցները, փոխվում է մտքի որակը, ձևավորվում է աշակերտի

ինքնուրույնությունը, քննադատողականությունը, առավել ճկուն է դառնում մտածողությունը:

Ստեղծագործական կարողությունները պայմանավորված են անձնային որոշակի որակներով: Եթե վաղ տարիքում երեխայի ստեղծագործական հակումները վառ կերպով դրսևորվում են նրա սիրած զբաղմունքի՝ նկարչության, ապա կրտսեր դպրոցական տարիքում՝ գրական ստեղծագործական գործունեության մեջ: Կրտսեր դպրոցականների ստեղծագործելու գործընթացի հիմնական դժվարությունը պայմանավորված է գրավոր և բանավոր խոսքի ոչ ճիշտ կառուցմամբ և բառապաշարի աղքատությամբ[17]:

Ստեղծագործական կարողությունների հիմքում ընկած է ստեղծագործական մտածողությունը, որն առաջ է բերում ճանաչողական ակտիվությունը: Ստեղծագործական գործունեությունը ճանաչողական է և ենթադրում է կանխատեսելու կարողություն, խնդիրներ լուծելու հեռանկարներ:

Ճանաչողական ակտիվությունը դրսևորվում է տարբեր կերպ: Միջին դպրոցականը կարող է ուշի ուշով լսել ուսուցչին, գրի առնել նրա կողմից առաջադրված նյութը, նրա ցուցումով ինչ-որ խնդիրներ լուծել: Այսպիսի հանձնարարություններն ակտիվություն են պահանջում, բայց դա նմանակման բնույթ է կրում. դա ուսուցչի առաջադրած հարցի պատասխանն է: Դրանից տարբերվում է աշակերտի մի ուրիշ ակտիվություն, որի հիմքում ընկած է աշակերտի ճանաչողական նախաձեռնությունը: Առավել բարձր մակարդակ է աշակերտի ստեղծագործական ակտիվությունը: Դա ոչ միայն ակտիվ որոնում է ենթադրում, այլև անհրաժեշտ գործառություններ: Ակտիվության բարձրագույն մակարդակը աշակերտին տանում է դեպի ճանաչողական ինքնուրույնության:

Մ. Ի. Ենիկեևը առանձնացրել է ճանաչողական ակտիվության փուլերը՝ ակտիվացման համապատասխան եղանակներով.

◆ ճանաչողական խնդրի գիտակցում: Այստեղ հիմնական եղանակներն են համարվում հետևյալները՝ հայտնի փաստերի արդիականացում, դրանց համադրում միմյանց և խնդրահարույց նոր իրավիճակների հետ.

---

[17] Չիբուխչյան Կ., Մայրենիի դասերին սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը՝ որպես արդյունավետ ուսուցման պայման, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, թիվ. 3, Եր., 2013, էջ 10:

◆ անցում ճանաչողական գործընթացի. հիմնական եղենակներն են՝ նոր փաստերի համեմատությունը և համադրումը, աշակերտներին ինդուկտիվ մտահանգումների մղումը, ինքնուրույն եզրակացությունը:

Վ. Վ. Դավիդովի հետազոտություններում Միջին դպրոցի աշակերտների ուսումնական գործունեության տեսությունն աչքի էր ընկնում հատկապես նրանով, որ այս գիտնականը ցույց է տվել ուսումնական գործընթացում անձի գիտակցության ձևավորվելու փուլերը, որի հիմքում ընկած է տեսական մտածողությունը: Նրա աշխատությունները վկայում են, որ զարգացող մանկավարժության սինթեզը հնարավոր է միայն ձևավորվող փորձարարական մեթոդի հիման վրա, որն իր մեջ տոգորում էր գիտության տարբեր ոլորտների, իսկ ամենից առաջ՝ ամբողջ հոգեբանությունը: Այդ մեթոդի կիրառումը վկայում է այն մասին, որ դիդակտիկայի ժամանակակից հետազոտությունները փորձարարարական մակարդակից անցել են տեսականի[18]:

Խնդրի ճիշտ առաջադրումը ենթադրում է ակտիվ մտածական գործունեություն: Չափազանց ուժեղ մոտիվացիայի դեպքում առաջ է գալիս ստերեոտիպ (շաբլոն) ուղիներով գնալու հակում, և, հետևաբար, ստեղծագործաան ընդունակությունների դրսևորում:

Ստեղծագործական կարողությունների զարգացման պայման է ինքնուրույն աշխատանքը: Աշակերտի ինքնուրույնությունը ուսումնական գործունեությունում դրսևորվում է.

◆ ճանաչողական խնդիրների լուծման մեջ յուրօրինակ հնարների կիրառմամբ.

◆ եզրահանգումների, ընդհանրացումների մեջ ոչ պատրաստի պատասխանով.

◆ մտածական գործողությունների փաստական և տեսական վերլուծությամբ:

Ստեղծագործական կարողությունը ենթադրում է երևակայության զարգացում, ուստի անհրաժեշտ է սովորողներին տալ այնպիսի բազմաբնույթ առաջադրանքներ, որոնք նպատակաուղղված կլինեն ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երեխայի մտածողության զարգացմանն ու ստեղծագործական երևակայությանը: Այդպիսի հնարներից է նամակ-շարադրությունը՝ ստեղծագործական բնույթի աշխատանք, որում խոսքն ուղղված է ծանոթ տեքստի դրական կամ բացասական հերոսին, կամ

ուղղակի մեկին: Աշխատանքները գնահատելուց հետո դասարանում բոլոր աշակերտների ուշադրությանը ներկայացնելով՝ ուսուցիչը նոր հղացումների հնարավորություն է ստեղծում:

Այսպիսով՝ ուսումնական գործունեությունը ծագում է աշակերտի մոտիվացիայի հիման վրա և ենթադրում է այնպիսի մոտեցումների առկայություն, ինչպիսիք են ընտրողականությունը, նպատակը, առաջացած խնդիրների հաղթահարումը, որոնք պետք է նպաստեն ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով՝ «Տեխնոլոգիայի դասերին երեխայի անձի ձևավորման առանձնահատկությունները միջին դպրոցում» թեման, եկանք հետևյալ եզրակացության.

1. Միջին դպրոցում մանկավարժական գործընթացի կազմակերպման գոր-ծում իր ուրույն տեղն ունի ձեռքի աշխատանքը՝ որպես միջին դպրոցականների ստեղծագործական կարողությունների ձևավորման միջոց:
2. Ստեղծագործական գործունեությունը, որն իրենից ներկայացնում է զանազան ձեռագործ աշխատանքների պատրաստում, ստեղծագործական երևակայությունը խթանող, ինքնուրույն և խմբային աշխատանքների կատարում, գեղարվեստական գրականության ընթերցում, վերլուծում և քննարկում, մեծապես նպաստում է կրտսեր դպրոցականի անձի լիարժեք ձևավորմանը:
3. Ձեռքի աշխատանքը նպաստում է սովորողների կրթական գործունեության ակտիվացմանը, նոր նյութը հեշտությամբ յուրացնելու ունակությունների ձևավորմանը, մեծացնում է ուսման հանդեպ հետաքրքրությունը, ակտիվացնում է մտավոր և հուզական գործառույթների փոխգործակցությունը, խթանում է միջին դպրոցի աշակերտների ստեղծագործական մտածողության, երևակայության զարգացմանը, ուշադրության կենտրոնացմանը, գեղագիտական ճաշակի, գունային զգացողության ձևավորմանը, տարբեր նյութերի հետ աշխատելու, ինքնուրույն աշխատանք կատարելու ունակությունների ձևավորմանը, մատների մանր մոտորիկայի զարգացմանը:
4. Դասապրոցեսում ընդգրման համար ձեռքի աշխատանքի տեսակը և պատրաստման միջոցները ընտրելիս պետք է հաշվի առնվեն աշակերտների հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Էլկոնին Դ.Բ., Միջին դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Եր., 1975, էջ 51:
2. Բալյան Ա.Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Եր., 1983, էջ 206-208:
3. Նույն տեղում, էջ 257-258:Աթայան Ռ., Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Եր., «Լույս» հրատ., 1974, 204 էջ:
4. Эльконин Д.Б., Детская психология, Москва, 2007, стр. 177-183.
5. Բալյան Ա.Ա., Աշակերտների ճանաչողական պահանջմունքները և դրանց ձևավորման ուղիները,Եր., 1982, էջ 62:
6. Էլկոնին Դ.Բ., նշվ. աշխ., էջ 75:
7. Բալյան Ա.Ա., Մանկավարժական..., էջ 254:
8. Մելքումյան Մ.Ս., Երեխաների զարգացումն ու տարիքային մի քանի առանձնահատկությունները, Եր., 1957, էջ 32-35:
9. Подласый И.П., Педагогика средней школы, Москва, 2000, стр. 169-172.
10. Մելքումյան Մ.Ս., նշվ. աշխ., էջ 48:
11. Ամիրջանյան Յ., Սահակյան Ա., Մանկավարժություն, Եր., 2005, էջ 223:
12. Кулагина И.Ю., Ученики средней школы, Москва, 2009, стр. 176.
13. Նույն տեղում, էջ 178:
14. Ամիրջանյան Յ., Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 255:
15. Նույն տեղում, էջ 257:
16. Նույն տեղում, էջ 29-30:
17. Չիբուխչյան Կ., Մայրենիի դասերին սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը՝ որպես արդյունավետ ուսուցման պայման, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, թիվ. 3, Եր., 2013, էջ 10: